Իրավական հավկուրություն, թե խամաճիկների թատրոն

28.09.2012 09:28

Սկզբնաղբյուր՝ http://hetq.am/arm/opinion/18698/iravakan-havkurutyun-te-khamatchikneri-tatron.html

Ամեն անգամ, երբ ուզում եմ ինչ-որ բան գրել դատարան-դատախազություն «ոխերիմ բարեկամների» փոխհարաբերությունների մասին, ինձ հարց եմ տալիս՝ ինչն է փոխվելու իմ կամ մյուսի գրելուց կամ չգրելուց: Ցավոտ հարց է: Այդպես մտածում ես քաղցկեղով հիվանդ հարազատի մասին, որին այլևս ոչինչ չի օգնում, չնայած որ դու անում ես ամեն հնարավորը գոնե նրա կյանքը մեկ-երկու օրով երկարացնելու համար: Բայց չէ որ մեր պետությունը հիվանդ չէ, էն էլ քաղցկեղով, չէ որ մենք իբր թե իրավական պետություն, քաղաքացիական հասարակություն ենք կառուցում: Իբր թե... :

Եվրոպական արժեքներից ինտեգրում ենք միայն խարամը՝ոսկին վանելով մեզանից հեռու, և այսպես անկման աստիճաններով գլորվում ենք չգիտեմ, թե ուր: Հասել ենք այնտեղ, որ «Պետական կարիքների զոհեր» հ/կ է ստեղծվել, որի անհրաժեշտությունն, իրոք, կա: Չէ որ պետության կարիքների համար մատաղացու գառներ են հարկավոր, որոնց զոհաբերելով՝ մի խումբ պետական պաշտոնյաներ արտասահմանյան բանկերում սառեցրած գումարներ կունենան, նրանց երեխաները կրթություն կստանան եվրոպաներում, սիրուհիները ճարպկորեն ձեռք կբերեն անշարժ և շարժական գույք, իսկ խեղճ գառների գլխին կարմիր բանտ /ժապավեն/ կկապեն, որը ծիսական արարողակարգի հետ ոչ մի կապ չի ունենա, այլ որպես հույսի նշան, իբր թե այսօր -վաղը կունենաս քո տունը, կամ նյութական ու բարոյական վնասի հատուցում կստանաս, և կամ անմեղ դատապարտվածը կհայտնվի ազատության մեջ: Դատարկ խոսքեր, սին հույսեր: Քանի քանիսն այդպես հուսահատվել ու հեռացել են երկրից: Քանի քանիսն են եկել երկիր, որ ինչ-որ գործ անեն, շենացնեն Հայաստանը, ապրեն հայրենիքում, բայց չէ...հեռացել են:

Այս էլ քանի տարի իբր դատահրավական բարեփոխումներ ենք իրականացնում: Միևնույնն է, ոչինչ չի ստացվում. այդ համակարգում աշխատում են մարդիկ, որոնց նախաճաշը բաղկացած է քծնանքից և ծուռ ողնաշարից, ճաշը՝իրավական անգրագիտությունից, իսկ ընթրիքը՝ փողի հանդեպ ունեցած մոլուցքից: Իհարկե, բոլորը չէ, որ այդ ճաշացանկով են սնվում: Կան նաև շատ արժանավորներ, որոնց ներկայությունը, մասնագիտական գիտելիքների կարողությունը, մարդկային հատկանիշները ոգևորում են քեզ, և թվում է թե ուր որ է այդ համակարգը կկայանա, բայց չէ...այս վերջիններն էլ նրանց նման ինքնուրույն քայլել չեն կարող: Շնչելու և արտաշնչելու համար անգամ նրանք սպասում են վերևների «դաբրոյին», ինչպես խամաճիկների թատրոնում տիկնիկն է «սպասում» իրեն խաղացնող դերասանին:

Այս է մեր դատահրավական համակարգը: Այստեղ մարդկանց արդար պահանջները բախվում են համակարգի սառը պատերին ու փշրվում: Այդ պահանջների մեջ որդեկորույս մայրերի անապ վիշտ կա, խարդախների զոհերի անզորություն, նորանշանակ սպային քավության նոխազ չդարձնելու արդար պահանջ, հազարավոր մարդկանց իրավունքների ոտնահարում:

Թե լրագրողական, թե փաստաբանական պրակտիկայում բացառիկ դեպքերի եմ հանդիպել, երբ դատարանը ասենք, օրինակ, քննիչից պահանջում է ներկայացնել կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հիմնավոր ապացույցներ: Այս կապակցությամբ Եվրոպական դատարանը «Մանսուրն ընդդեմ Թուրքիայի գործով» 08.06.1995 թվականի վճռում նշել է, որ

«Ազգային դատարանը բազմիցս հաստատել է կալանքիտակ պահելու ժամկետի երկարացումը, անփոփոխ օգտագործելով նույնանման ձևակերպումները,հաճախ առանց գործի հետագա որևէ ուսումնասիրության: Դատավորն ինքնաբերաբար հաստատել էիրավապահ մարմինների միջնորդությունները՝ չկատարելով ինքնուրույն բծախնդիր աշխատանք»:

Հայաստանում գրեթե ամեն օր դատավորները հաստատում են իրավապահ մարմինների միջնորդությունները՝ խախտելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի պահանջները, որոնց մասին բարձրաձայնում են քաղաքացիները, փաստաբանները, բայց սայլը տեղից չի շարժվում:

Չեմ ուզում խոսքս ծարաբեռնել իրավական բառամթերքով և վերլուծություններով, պարզ ասեմ, որ յուրաքանչյուրս պետք է ձգտենք ինքնամաքրման, որպեսզի բարեփոխվի դատաիրավական համակարգը, որպեսզի ունենանք կանխատեսելի դատարաններ և քաղաքացիական արիություն դրսևորող դատավորներ, որոնք արդարացի դատական ակտ կայացնելիս վախ կամ մտահոգություն չունենան, որ վաղը կամ մյուս օրը կդառնան գործազուրկ:

Անահիտ Հովհաննիսյան
փաստաբան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })